Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 29-ի N 300 - Ն որոշման

# ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

1. Ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հարկադիր կատարողն առանց իր համաձայնության զբաղեցրած պաշտոնից հավասարազոր այլ պաշտոնի մինչև փոխադրման համապատասխան հիմքի վերանալը կարող է փոխադրվել հետևյալ դեպքերում՝

1) առկա է անհաղթահարելի ուժ՝ արտակարգ և (կամ) անկանխելի հանգամանքներ, օրինակ՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, ինչպես նաև արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներ, որով պայմանավորված առաջացել է հարկադիր կատարողին այլ բաժին (բաժանմունք) փոխադրելու անհրաժեշտություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ